ըրին Փուլմպու Նախագահին դէմ. և այդ ցոյցերուն մեծ նշանակութիւն տրուեցաւ։

Միրրի զօրապետն հրաժարելով իւր պատերազմի պաշտօնէութենէն, Թագաւորն ընդունեցաւ անոր հրաժարականը, և ամսոյս 7ին պաշտօնապէս հրատարակուեցաւ այդ։ Հիմա Միրրիի յաջորդն կը փնտռուի։

Մարթինին ամսոյս 10ին պիտի երթար յԷրիթրէա. որովհետև Վինոսթայի հետ նախ պիտի խօսէր և որոշէր՝ թէ երկու ընկերութեանց որո՞ւն յանձնուի ոսկւոյ հանքերուն պեղումը։

Դեկտեմբեր 31ին հրատարակուեցաւ վճիռ ազատութեան շատ տեսակ բանտարկելոց, և այսպէս փակուեցաւ 1899 տարին։ Վճռոյն մէջ մանրամասն գրուած է՝ թէ ինչպիսի՛ յանցաւորաց ազատութիւն պիտի տրուի։

Նէապօլսոյ իշխանն այցելեց Ամալֆին։ — Փամփիլի երեսփոխանն ալ յԱյա գնաց խաղաղութեան դաշնագրոյն ստորագրելու համար. որ յոյժ ծաղրակա՛ն է. Այայի խաղաղութեան ժողովքէն յետոյ սկսան պատերազմները։

Լևոն ԺԳ. որքազան Քահանայապետին ալ Նոր տարւոյ առթիւ ամէն կողմէն, ինչպէս նաև ի կայսերաց և 'ի թագաւորաց, մաղթանքներ հասան։

Ravenswood, յուլիս 17/99.

Առ Պատուարժան խմբագրութիւն
"Բազմավէպ„ հանդէսի
Տեարք

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Սոյն առթիւ, իմ սրտագին խնդակցութիւնս կը յայտնեմ «Բազմավէպ»ի արդի պատուարժան խմբագրութեան, որ այնքան խնամքով և կրթիչ գրուածքներով կը զարդարեն իւր էջերը. միշտ հաճոյքով մը կը կարդամ, այս տարուայ «Բազմավէպ»ի թիւերն և գիտեմ թէ, որքան կօգտուիմ անոնցմէ. և իմ անկեղծ փափաքս է, տեսնել զայն աւելի զարգացած և կատարելագործուած, հայ խմբագրութեան մէջ լուրջ թերթեր խիստ հազուագիւտ են և «Բազմավէպ»ն անոնց մէջ առենառաջին տեղը կը գրաւէ: Գէթ այս է իմ միակ համոզումս:

Բուրեցս յաջողութիւն մաղթելով մնամ ընդ Ձեզ
Միշտ Ցարգանօք.
ԱՐՇԱԿ ՄԱՆԱՇԵԱՆ

Հին հասցէն M.r A. Manashian
(Sand Bank) RAVENSWOOD
Scotland

Նոր հասցէն M.r A. Manashian
(C/o H. Kamberian MANCHESTER
40 Cooper Street) England

Constantinople նոյեմբ. 18, 1899.

Խմբագիր «Բազմավէպ»ի

. . . . . . . . . . . . . . . . . . .

Վերջերս Վիեննայի Մխիթարեանց թերթը ձեռքս անցաւ, անոր կողքին վրայ տեսայ որ արտասահմանի թերթի մը յօդուածոց ցանկին մէջ գրուած կար Նաև Հ. Երեմիոն բարոյականը, իրաւցնէ շատ հետաքրքրուեցայ, կարելի չէ՞ որ այդ յօդուածին իմաստը լսնի իմացնէիք:

. . . . . . . . . . . . . . . . . . .

շնորհակը լսելով հայկական հին մատենագրական նիւթերէն զատ՝ Ձեր թերթին մէջ գտնուած միւս ամէն յօդուածները հետաքրքրութեամբ կը կարդամ: . . . . . . . .

Դ. Ց. ԿՈՒՐԵԿ.

Հասցէ M.r L. Gurek
(Calata, Tchétcheyan
Han 19) CONSTANTINOPLE

# ՆԱՄԱԿԱՆԻ

ՊՈԼԻՍ. — «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ». — Շնորհակալութիւն: — Ըստ Ձեր խնդրանաց մեր թերթը ուղղակի Ձեր հասցէին խաւրեցինք. կը խնդրենք որ ըստ Ձեր խոստման նաև Ձերինը ուղղակի մեզ խաւրէք:

ՎԻԵՆՆԱ. — «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ». — Պատուական խմբագրութիւնդ կը փութանք կասկածները փարատել հետագայ երկու նամակներով զորս կեղծ կը կարծէիք:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ


Ուսումնասիրութիւն շարականաց խազից. 49
ՍԱՐԳՍԵԱՆ Հ. Ս. — Կ. Գաօքէյմանի և "Գիրք վաստակոց„ի հայերէն թարգմանութիւնն . 52
ՆՐՆՄ. Հ. Ս. — Հանք և իրենց ստուգաբանութիւնը . . . . . . 58
ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Աշտարակ . . . 60
ՍԱՐԳՍԵԱՆ Հ. Ս. — Ակնարկ մը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչէն առաջ՝ հայոց քրիստոնէական հաւատոց վիճակին վրայ. . . . 63


## ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Հ. Ա. Կ. Բազրատունի և Հոմերի թարգմանութիւնը . . . 65
Գեղեցկագիտութիւն. . . . . 72
ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Մխիթար . . . 76
**Գրախօսական ակնարկներ.** — Տասնիններորդ դարի կտակը. . . . . 79
Խաչատուր Աբովեան հասարակական գործունէութիւնը . . . . . . 79
Անմեղ զոհեր . . . . . . 80
Ինքնուսուցիչ անգլիերէն լեզուի . . 81
Առ ծեռն Ամերիկեան բառարան . . 82
ԵՐԵՄ. Հ. Ս. — **Հանդէս Հանդիսից** — Բանաւէր. — Համալսարան. — Բիւզանդիոն. — Արեւ. Մամուլ. — Բիւրակն. — Մշակ. — Նոր դար . . . . . . . 82


## ՆՈՐ ԿԵԱՆՔ


ՍԱՐԳՍԵԱՆ Հ. Ս. — Մազնիսական քուն . . 87
ՏԱՆԴԷ. — Երրորդ պարունակ. Որկրամոլք կերբերոս և այլն. — Թրգմ. ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. 91
Եւրոպական մամուլ . . . . . 94
Քաղաքական անիս . . . . . 95


digitised by A.R.A.R.@